ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1465 25.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՍՏԱՑ № 3749
26 09 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը հիմք ընդունելով 09.09.2014թ-ի իր կողմից կատարված հայտարարությունը, առ այն, որ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների մեծամասնությունում Խոշտանգումների և մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի պահանջներով 3 անգամյա, որից մեկը տաք սնունդ չի տրամադրվում, հայտնում ենք. սույն թվականի սեպտեմբեր ամսվա այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ ոչ Հայաստանի ծայրամասային ՁՊՎ-ներում, այլ հենց մարզի կենտրոն համարվող քաղաքներում գործող ՁՊՎ-ներում ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ-ում և ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Սևանի բաժնի ՁՊՎ-ում արձանագրվել է, որ 3 անգամյա սնունդ, որից մեկը տաք, չի տրամադրվում:

Ավելացնենք նաև, որ Դիտորդական խմբի կողմից այցելություն կատարած մնացած ՁՊՎ-ների վերաբերյալ չկա համապատասխան փաստեր, քանի որ ՁՊՎ-ներում անձիք չեն եղել:

1. ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ-ում պահվող ձերբակալված անձը Դիտորդական խմբի հետ զրույցում տեղեկացրել էր, որ նախորդ օրը իրեն տրամադրել են շիլա և թեյ, իսկ տվյալ օրը կրկին թեյ և շիլա: Հերթապահություն իրականացնող ոստիկանը, պնդեց, որ տվյալ օրը տվել են թեյ: Դիտորդական խումբը այդ բոլորը հիմք ընդունելով, հերթապահ մասի պետի ժ/պ-ին խնդրեց լսել հերթապահ ոստիկանին, ով պնդում էր թեյ են միայն տրամադրել, և դիտորդի հետ մտնել խուց և լսել ձերբակալվածին, ով պնդում էր, որ առավոտյան արդեն իրեն շիլա և թեյ են տրամադրել:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org
«Ոստիկանության Հանրապետություն» 7508

2. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Սևանի ՀՊՎ-ում ձերբակալվածը պնդում էր, որ իրեն տրամադրվել է տապակած կարտոֆիլ և թեյ, իսկ հերթապահ ոստիկանը պնդում էր, որ տրամադրվել է շիլա և թեյ: Երբ դիտորդների ուղեկցությամբ պատասխանատու ոստիկանի հետ այցելեցին խուց, ձերբակալվածը պնդում էր, որ չի հիշում, թե իրեն երբ են շիլա տվել, երբ տապակած կարտոֆիլ, այն դեպքում, երբ նա մի քանի ժամ էր գտնվում ՀՊՎ-ում, և ոստիկանների ներկայությունն արդեն իսկ պարզ էր, որ ճնշող էր:

Միաժամանակ ավելացնենք նաև, որ ՀՊՎ-ների մեծամասնություններում բացակայում են սննդի տաքացման համար նախատեսված տաքացուցիչները, որը ևս մեկ անգամ ապացուցում է, որ հնարավոր չէ տեղում տաքացնել և տաք սնունդ տրամադրել :

Այսպիսով՝ Դիտորդական խումբը կարծում է, որ ոչ թե պետք է մինչ Դիտորդական խմբի ՀՊՎ մուտք գործելը ՀՊՎ-ում պահվող անձանց ոստիկանները հրահանգավորեն, թե խմբի հարցի դեպքում ինչ սնունդ են տրամադրել, ինչ պատասխանեն, այլ **խնդրում ենք միջոցներ ձեռնարկել և սննդի գումարը բարձրացնել մինչև 1100-1200 ՀՀ դրամի սահմանները, որպեսզի հնարավոր լինի ՀՊՎ-ում պահվող անձին տրամադրել Խոշտանգումների և մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի պահանջով նախատեսված 3 անգամյա սնունդ, որից մեկը տաք:**

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2014թ.

Ձեր 24.09.2014թ. թիվ 2621/1465 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի և Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժինների ձերբակալվածներին պահելու վայրեր կատարած այցելությունների ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, Լոռու և Գեղարքունիքի մարզային վարչություններում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից կատարված ստուգումների արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 18.09.2014թ. ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում հասարակական դիտորդների խմբի կողմից ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ կատարած այցելության ժամանակահատվածը համընկել է տվյալ օրվա հերթափոխի հանձնման-ընդունման հետ: Նույն օրը ժամը 08.10-ի սահմաններում ոստիկանության Տարոնի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ի ոստիկան, ոստիկանության ենթասպա Մ.Մելիքջանյանը թեյ է տվել ՁՊՎ-ում գտնվող ձերբակալված Ա.Հարությունյանին, այնուհետև հերթափոխը հանձնելու նպատակով ստուգել ՁՊՎ-ի մատյանները: Որոշ ժամանակ անց հերթափոխն ընդունող ՁՊՎ-ի ոստիկան, ոստիկանության սերժանտ Ա.Շահինյանը, մինչ հերթապահության ընդունումը, մատակարարող ընկերությունից ստանալով օրվա ճաշացանկով նախատեսված պատվիրած սնունդը՝ բրնձով շիլան, այն բերել է ՁՊՎ և տվել ՁՊՎ-ում պահվող ձերբակալված Ա.Հարությունյանին: Հերթափոխը հանձնող ՁՊՎ ոստիկան Մ.Մելիքջանյանը զբաղվածության պատճառով և տեղյակ չլինելով, որ հերթապահություն ընդունող ՁՊՎ ոստիկան Ա.Շահինյանը արդեն իսկ ձերբակալված Ա. Հարությունյանին տրամադրել է շիլա, դիտորդների խմբի անդամի հարցին պատասխանել և պնդել է, որ ինքը ՁՊՎ-ում գտնվող ձերբակալվածին միայն թեյ է տրամադրել, ինչի պատճառով էլ ձերբակալված Ա.Հարությունյանի և ՁՊՎ ոստիկանի խոսքերի միջև առաջացել է հակասություն:

2. Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից կատարված ստուգումների արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ձերբակալված

Ա.Դավթյանը ոստիկանության Սևանի բաժնի ՁՊՎ է ընդունվել 17.09.2014թ. ժամը 10.55-ին: Դիտորդների խմբի այցելության օրը ՁՊՎ-ում պահվող երկու անձանց՝ Ա.Դավթյանին և Մ.Եսայանին տրվել է տաք ճաշ (շիլա): Տարաձայնությունների պատճառը եղել է այն, որ դիտորդների խմբի անդամների հարցերին պատասխանելու ժամանակ ձերբակալված Ա.Դավթյանը սկզբում լրջություն չի ցուցաբերել և դիտորդներին հայտնել է, որ տապակած կարտոֆիլ ու թեյ են տրամադրել իրեն, սակայն հետո նույն հարցերին տվել է իրականությանը համապատասխանող պատասխաններ:

Այնուամենայնիվ, ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ների վարչակազմերի ծառայողներին նախազգուշացվել է դիտորդների խմբի այցելությունների ժամանակ վերջիններիս տալ հիմնավոր և սպառիչ պատասխաններ:

3. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով սահմանված չէ ՁՊՎ-ում սննդի տաքացուցիչի առկայությունը, սակայն բաժինների հերթապահ մասերում առկա են տաքացուցիչներ և հարկ եղած դեպքում սնունդը տաքացվում է:

4. Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ներում պահվող անձանց տրամադրվող անվճար սննդի գումարները բարձրացնելուն՝ 17.10.2014թ. թիվ 2/2-1-2606 գրությամբ Ձեզ արդեն իսկ տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

ՀՀ ոստիկանության շտաբ